ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
Տաթև Անտոնյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ:

**2. Գործուղման վայրը և ժամկետները**
Էստոնիա՝ Տալլին (մայիսի 18 - 21) և Ֆինլանդիա՝ Հելսինկի (մայիս 22 —23):

**3. Հրավիրող կողմը**
Էստոնիայի և Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարություններ

**4. Գործուղման նպատակը**
Հայաստանում համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման նպատակով ֆինլանդական և էստոնական առաջատար փորձի, տվյալ պետությունների անվտանգային ճարտարապետության փոփոխության համատեքստում ՀՊԱՀ -ի դիմակայունության բաղադրիչի ապահովման մեխանիզմների, պետական և հասարակական մակարդակում դերերի և պատասխանատվությունների բաշխման մոդելի, գործառույթների, ընթացիկ խնդիրների և հեռանկարների ուսումնասիրություն:

**5. Քննարկված թեմաները**
ՀՊԱՀ համակարգի ներդրումն ու զարգացումը, պետական համակարգում ղեկավարման, կառավարման և համակարգող մարմինների աշխատանքը խաղաղ, ճգնաժամային և պատերազմական իրավիճակում, դերերի ու պատասխանատուութիւնների բաշխումը, մասնավոր և հասարակական ոլորտների հետ համագործակցությունը, քաղաքացիների դերը և ներգրավվածությունը:

**6. Հանդիպումները, ելույթները բարձրացված կամ քննարկված հարցերը**
Այցելության ընթացքում տեղի ունեցան հետևյալ հանդիպումները .
**Էստոնիայում՝**
Էստոնիա-Հայկական խորհրդարանական խմբի, էլեկտրոնային կառավարման ակադեմիայի, Էստոնիայի վարչապետի աշխատակազմի, Էստոնիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ:
**Ֆինլանդիայում՝**
Պաշտպանության նախարարության պաշտպանական դասընթացների կենտրոնի, Հիբրիդային սպառնալիքների հակազդման գերազանցության կենտրոնի, Արտաքին

գործերի նախարարության, Ճգնաժամային ապահովման պետական գործակալության, Ոստիկանության միջգերատեսչական համագործակցության գրասենյակի, Վարչապետի գրասենյակի ռազմավարական հաղորդակցման վարչության, Անվտանգութեան կոմիտեի, Ռազմամարզական վարժանքների ազգային միության, Ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

ՀՊԱՀ-ի շրջանակներում Էստոնիայի և Ֆինլանդիայի հետ կապերի խորացում, պաշտպանական-անվտանգային ոլորտում կարողությունների զարգացման աջակցություն, ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդում:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՀՊԱՀ-ի ներդրման շրջանակներում հայ-ֆիննական երկկողմ անվտանգային հարաբերությունների խորացում, ձեռքբերված պայմանավորվածությունների ինստիտուցիոնալացում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Տաթև Անտոնյան, 29.05.2023 թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը- Վարչապետի աշխատակազմ, Անվտանգության խորհուրդ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը- 547-Ա/ 518-Ա
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Տաթև Անտոնյան- Անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ/ Հրաչյա Արզումանյան- ԱԽ գրասենյակի փորձագետ/ Արման Պողոսյան-ԱԽ գրասենյակի փորձագետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը- Էստոնիայի և Ֆինլանդիայի Հանրապետություններ
5. Գործուղման ժամկետները- Մայիսի 18-ից 23-ը ներառյալ
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

√ 2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

√ ☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Տաթև Անտոնյան* | *Հրաչյա Արզումանյան* | *Արման Պողոսյան* | | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | էկոնոմ դաս | էկոնոմ դաս | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 496229 դրամ | 496229 դրամ | 496229 դրամ | | 1488687 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 149 եվրո+137.33 եվրո | 149 եվրո+137.33 եվրո | 149 եվրո+137.33 եվրո | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | | | |
| | Օրերի քանակը | 5 գիշեր | 5 գիշեր | 5 գիշեր | | |
| | Ընդամենը (դրամ) | | | | | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 111+93 եվրո | 111+93 եվրո | 111+93 եվրո | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | | | |
| | Օրերի քանակը | 6 օր | 6 օր | 6 օր | | |
| | Ընդամենը (դրամ) | | | | | |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | | | |
| | Այլ ծախսեր Դիվանագիտական սրահ | | | | | |
| Ընդամենը ծախսեր (հազ. դրամ) | | | | | | |

30.05.2023 ԱԽ գրասենյակի ղեկավար ԱՆԱՀԻՏ ՇԻՐԻՆՅԱՆ